Արձանագրություն N 2
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/16» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

22.03.2019թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մարտիրոսյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Գևորգյանը, Լ. Գևորգյանը, Վ. Գուլգուլյանը, Ե. Մատասյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/16» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ա. Մարտիրոսյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի մարտի 22-ին, ժամը 15:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտիի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/16» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Մարտիրոսյան)

Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

	Մասնակիցների անվանումը
3	«Էմ Ջի դիզայն» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մասին

(Ա. Մարտիրոսյան)

3.1 Գնանշման հարցման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.

Մասնակցի անվանումը	Նախա-հաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր
«Էմ Ջի դիզայն» ՍՊԸ	550000	5955000	-----	5955000

3.2 Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4.Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա. Մարտիրոսյան)

Մասնակցի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթի (հայտի) գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրեց անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ՝ մասնավորապես.

1. Կցված չէ հայտարարությունը՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին (Հավելված 3)
2. Կցված չէ հրավերով սահմանված համապատասխան լիցենզիաների և ներդիրը պատճենները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 41-րդ կետը և հրավերի ՄԱՍ I-ի 7.9 կետը, որոշեց կասեցնել նիստը և հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցել «Էմ Ջի Դիզայն» ՍՊԸ-ին, առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունը:
Մինչև նշված ժամկետի ավարտը անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Հանձնաժողովի Նախագահ՝		Ա. Մարտիրոսյան
Անդամներ՝		Ս. Գևորգյան
		Լ. Գևորգյան
		Վ. Գուլգուլյան
		Ե. Մատասյան
Քարտուղար՝		Գ. Մուրադյան